ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Նաիրի փ. 42, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 թվականի N 2-Ա

## ՄԱՐԻԵՏՏԱ ՔԵՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 164 և 169 -րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշման N 1 հավելվածի 15-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Մարիետտա Քեյանի 2019 թվականի փետրվարի 26-ի դիմումը. *կարգադրում եմ՝*

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Մարիետտա Քեյանին 2019 թվականի մարտի 1-ից ապրիլի 4-ը ներառյալ տրամադրել 01.03.2018 - 01.03.2019 թվականների ժամանակահատվածի արձակուրդը (20 նվազագույն + 4 լրացուցիչ) 24 աշխատանքային օր տևողությամբ:

2. Մարիետտա Քեյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում աշխատակազմի քարտուղարի պարտականությունները վերապահել աշխատակազմի գլխավոր մասնագետ Գայանե Մանուկյանին:

3. Մ.Քեյանին աշխատանքի մեջ համարել 2019 թվականի ապրիլի 5-ից:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2019թ. փետրվար 27

գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 8-Ա

## ԳՐԻԳՈՐ ԺԱՄԿՈՉՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով, նկատի ունենալով, որ հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով շինության անվտանգ շահագործման վերաբերյալ դրական եզրակացությունը և սեփականատեր Գրիգոր Ժամկոչյանի 2019 թվականի հունվարի 29–ի դիմումը. *որոշում եմ՝*

1. Օրինականացնել Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում Գրիգոր Ժամկոչյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-008-016 կադաստրային համարով 0.063 հա մակերեսով տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված 296.4 քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությունները. 286.0 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը և 10.4 քառակուսի մետր արտաքին մակերեսով պարիսպը, համաձայն՝ «Կարեն Մաչանյան,, Ա/Ձ-ի կողմից տրված շինությունների հատակագծի:
2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը բնակելի տան 1 քառակուսի մետրի համար՝ 2600 դրամ, իսկ պարսպի համար՝ 1560, վճարման ենթակա գումարը կազմում է 759 824 (յոթ հարյուր հիսունինը հազար ութ հարյուր քսանչորս) ՀՀ դրամ:
3. Հողամասին և շինության հասցեն թողնել անփոփոխ. Արմավիրի մարզ, գյուղ Փարաքար, Նարեկացի թաղամաս 1-ին փողոց N 2:
4. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Փարաքար համայնքի վարչական եկամուտների 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2019 թ. ..........................
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 թվականի N 9-Ա

## ԱՇՈՏ ԴԱՎԹՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով, նկատի ունենալով, որ հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով <<Գեոինժինիրինգ>> ՍՊԸ-ի կողմից տրված շինության անվտանգ շահագործման վերաբերյալ դրական եզրակացությունը և սեփականատեր Աշոտ Դավթյանի 2019 թվականի փետրվարի 1–ի դիմումը. *որոշում եմ՝*

1. Օրինականացնել Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղում Աշոտ Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0085-0042 կադաստրային համարով 0.07 հա մակերեսով տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված 228.2 քառակուսի մետր արտաքին մակերեսով օժանդակ շինությունները և 6.9 քառակուսի մետր արտաքին մակերեսով պարիսպը, համաձայն՝ <<ԿԱՖԷ>> ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների հատակագծի:
2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը օժանդակ շինությունների և պարսպի համար տան 1 քառակուսի մետրի համար՝ 1560 դրամ, վճարման ենթակա գումարը կազմում է 366.756 (երեք հարյուր վաթսունվեց հազար յոթ հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ:
3. Հողամասին և շինության հասցեն թողնել անփոփոխ. Արմավիրի մարզ, գյուղ Թաիրով, Հովսեփ Օրբելու փողոց N 12:
4. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Փարաքար համայնքի վարչական եկամուտների 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2019 թ. 04
գ.Փարաքար

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 թվականի N 10-Ա

## ԱՇՈՏ ԴԱՎԹՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով, նկատի ունենալով, որ հողամաս ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով <<Գեոինժինիրինգ>> ՍՊԸ-ի կողմից տրված շինութան անվտանգ շահագործման վերաբերյալ դրական եզրակացությունը և սեփականատեր Աշոտ Դավթյանի 2019 թվականի փետրվարի 1–ի դիմումը. *որոշում եմ՝*

1. Օրինականացնել Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղում Աշոտ Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0085-0040 կադաստրային համարով 0.016 հա մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված 160.0 քառակուսի մետր արտաքին մակերեսով արտադրամասը համաձայն <<ԿԱՖԷ>> ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների հատակագծի:
2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը արտադրամասի համար տան 1 քառակուսի մետրի համար՝ 3900 դրամ, վճարման ենթակա գումարը կազմում է 624 000 (վեց հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամ:
3. Հողամասին և շինության հասցեն թողնել անփոփոխ. Արմավիրի մարզ, գյուղ Թաիրով, Հովսեփ Օրբելու փողոց N 12/1:
4. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Փարաքար համայնքի վարչական եկամուտների 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2019 թ. փետրվար 04
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 թվականի N 11- Ա

## ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով սեփականատեր Անիկ Աբգարի Պողոսյանի 2019 թվականի փետրվարի 6-ի դիմումը. *Որոշում եմ՝*

1. Անիկ Աբգարի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղում գտնվող 04-098-083-009 կադաստրային համարով (սեփականության իրավունքի վկայական N 738186, տրված 29.12.2002.), 04-098-0083-029 կադաստրային համարով (սեփականության իրավունքի վկայական 737517, տրված 06.12.2002 թ.) և 04-0098-0083-0091 կադաստրային համարով (սեփականության իրավունքի վկայական N 2683902, 09.11.2010 թ.) հողակտորների միավորումից առաջացած անշարժ գույքին և առկա շինություններին տալ մեկ միասնական հասցե. Հայաստանի Հանրապետության, Արմավիրի մարզ, գյուղ Թաիրով, Մայրաքաղաքային փողոց N 107:

2.Սույն որոշմամբ տրամադրված հասցեն ենթակա է գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2019 թ. փետրվարի 6

գ.Փարաքար

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 թվականի N 12-Ա

## ՄԱՐԻԵՏՏԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով՝ <<Խաչվահան>> ՍՊԸ-ի կողմից տրված դրական եզրակացությունն այն մասին, որ ներքին ձևափոխումները չեն խախտում շենքի սեյսմակայունությունը և սեփականատեր Մարիետտա Սարիբեկյանի 2019 թվականի փետրվարի 11–ի դիմումը. *որոշում եմ՝*

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղում Մարիետտա Սարիբեկյանին սեփականության իրավունքով պատկանող 4 շենքի, N 21 բնակարանի 63.3 քառակուսի մետր մակերեսով տարածքին՝ համաձայն գույքի բաժանման հատակագծի, տրված «Ավագ Ավագյան Գագիկի» Ա/Ձ-ի կողմից, տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գյուղ Թաիրով 4-րդ շենք, N 21 բնակարան:
2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղում Մարիետտա Սարիբեկյանին սեփականության իրավունքով պատկանող 4 շենքի, N 21 բնակարանի 13.5 քառակուսի մետր մակերեսով տարածքին՝ համաձայն գույքի բաժանման հատակագծի, տրված «Ավագ Ավագյան Գագիկի» Ա/Ձ-ի կողմից, տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գյուղ Թաիրով 4-րդ շենք,N 21/1 բնակարան:
3. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը մեկ դռան ձևափոխման համար 2600 դրամ է, վճարման ենթակա գումարը մեկ փակված և մեկ նոր բացված դռան համար կազմում է 5 200 (հինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:
4.Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Փարաքար համայնքի վարչական եկամուտների 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
5.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2018թ. փետրվար 12
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 թվականի N 15-Ա

## ՀԱՄԼԵՏ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆԻ ԵՎ ԳԱԼՈՒՍՏ ՉԼԻՆԳԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով <<Մաչանյան Կարեն>> ԱՁԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը և շինությունների բնութագիրը և համասեփականատեր Համլետ Չիլինգարյանի 2019 թվականի փետրվարի 15–ի դիմումը. *որոշում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում Համլետ Չիլինգարյանին և Գալուստ Չլինգարյանին սեփականության իրավունքով պատկանող 0.0236 հա հողամասին, որից 0.0003 բաժնային սեփականություն և առկա շինություններին տրամադրել հասցե.Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գյուղ Փարաքար Վ.Սարգսյան 2-րդ փողոց N 42:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում Համլետ Չիլինգարյանին և Գալուստ Չլինգարյանին սեփականության իրավունքով պատկանող 0.0223 հա հողամասին, որից 0.0003 բաժնային սեփականություն և առկա շինություններին տրամադրել հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գյուղ Փարաքար Վ.Սարգսյան 2-րդ փողոց N 42/1:
3.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2019թ. փետրվար 18

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 թվականի N 16- Ա

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով սեփականատեր Կարապետ Ազատի Խանզադյանի 2019 թվականի փետրվարի 20-ի դիմումը. *Որոշում եմ՝*

1. Կարապետ Ազատի Խանզադյանին սեփականության իրավունքով պատկանող Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղում գտնվող 04-094-0081-0023 կադաստրային համարով (սեփականության իրավունքի վկայական N 06092018-04-0016, տրված 06.09.2018) և 04-094-0081-0021 կադաստրային համարով (սեփականության իրավունքի վկայական N 06032012-04-0065, տրված 06.03.2012 թ.) հողակտորների միավորումից առաջացած անշարժ գույքին տալ մեկ միասնական հասցե. Հայաստանի Հանրապետության, Արմավիրի մարզ, գյուղ Թաիրով, Լեռյի փողոց 1-ին նրբանցք N 6:
2.Սույն որոշմամբ տրամադրված հասցեն ենթակա է գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2019 թ. փետրվար 21

գ.Փարաքար

ՓԱՐԱՔԱՐ ... 0470 367

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 17-Ա

## ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով սեփականատեր Սուսան Ժիրայրի Շահինյանի 2019 թվականի փետրվարի 21-ի դիմումը. Որոշում եմ՝

1. Սուսան Ժիրայրի Շահինյանին սեփականության իրավունքով պատկանող Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղում գտնվող 04-098-0083-0047 (սեփականության իրավունքի վկայական N 2712137, տրված 24.01.2011թ.) և 04-094-0083-0049 կադաստրային համարներով (սեփականության իրավունքի վկայական N 22022019-04-0016, տրված 22.02.2019 թ.) հողակտորների միավորումից առաջացած անշարժ գույքին տալ մեկ միասնական հասցե. Հայաստանի Հանրապետության, Արմավիրի մարզ, գյուղ Թաիրով, Մայրաքաղաքային փողոց N 139։
2.Սույն որոշմամբ տրամադրված հասցեն ենթակա է գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից։
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2019 թ. փետրվարի 25
գ.Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 թվականի N 18-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումների պահանջներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք, շինության զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով Ղազամխեր Արշալույսի Չիլինգարյանի դիմումը. *որոշում եմ*՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղում համայնքային սեփականություն հանդիսացող 0.00433 հա՝ բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 43.3 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը համարել Փարաքար համայնքի սեփականությունը:

2. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղում 0.00433 հա համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա գտնվող 43.3 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը՝ համաձայն <<Կարեն Մաչանյան>> ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերի:

3. Հողատարածքին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գյուղ Թաիրով, Վ.Մամիկոնյան փողոց 1-ին նրբանցք N 10:

4. Քանի որ կառույցն իրականացվել է Ղազամխեր Չիլինգարյանի կողմից, առաջարկել նրան գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու հողամասը և շինությունը:

5. Սահմանված վճարը ավտոտնակի համար 1 քառակուսի մետրը՝ 2600դրամ է, որը 43.3 քառակուսի մետրի համար կազմում է 112 580 (մեկ հարյուր տասներկու հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամ և ենթակա է վճարման Փարաքար համայնքի վարչական եկամուտների 900325191154 հաշվեհամարին:

6. Հողամասի օտարման համար 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը 4524 դրամ է, որը 43.3 քառակուսի մետրի համար կազմում է 195 890.20 (մեկ հարյուր իննսունհինգ հազար ութ հարյուր իննսուն դրամ քսան լումա) ՀՀ դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի ֆոնդային եկամուտների 900325191139 հաշվեհամարին:

7. Վճարման ենթակա գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

8. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

9. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Մարիետտա Քեյանի վրա:

10. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել. վարչական կարգով՝ Փարաքար համայնքի ղեկավարին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2019 թ. փետրվարի 22

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 թվականի N 19-Ա

## ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով համասեփականատեր Աշոտ Խորենի Գասպարյանի 2019 թվականի փետրվարի 27-ի դիմումը. Որոշում եմ՝

1. Աշոտ Խորենի Գասպարյանին և Համեստ Քոլոմբոսի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Մեքենագործների փողոցի 3-րդ շենքի թիվ 21 երկու բնակարանների (սեփականության իրավունքի վկայական N 2367345, տրված 18.02.2010 թ. և N 2360639, տրված 25.02.2010թ.) միավորումից առաջացած անշարժ գույքին տալ մեկ միասնական հասցե. Հայաստանի Հանրապետության, Արմավիրի մարզ գյուղ Փարաքար, Մեքենագործների փողոց 3-րդ շենք, բնակարան N 21:

2.Սույն որոշմամբ տրամադրված հասցեն ենթակա է գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2019 թ. փետրվար 27

գ.Փարաքար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 թվականի N 20-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՈՖԻԱ ԱՐՄԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1328-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387–Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցներն իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը՝ 1964-1970 թվականներին, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանափակումների կազմում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով ըստ կտակի ժառանգության իրավունքի 2019 թվականի փետրվարիի 8-ի վկայագիրը և սեփականատեր Սոֆիա Կարապետյանի 2019 թվականի փետրվարի 25-ի դիմումը. որոշում եմ՝

1. Վերականգնել Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում Սոֆիա Արմիկի Կարապետյանի (ծնված 25.04.1957 թ.) գույքային իրավունքը՝ ճանաչել նրա սեփականության իրավունքը սեփականության իրավունքով պատկանող 0.0573 հա հողամասի, 103.6 քառակուսի մետր օրինական կառուցված շինությունների նկատմամբ: Սեփականության իրավունքը ճանաչել համաձայն հողամասի և շինությունների հատակագծերի՝ տրված «Մաչանյան Կարեն» ԱՁ-ի կողմից: Վերականգնումը կատարվում է անհատույց սեփականության իրավունքով:
2. Բնակելի տան և հողամասին տրամադրել հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գյուղ Փարաքար, Ռ.Արշակյան փողոց N 8:
3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2019 թ. փետրվարի 27

գ.Փարաքար